

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

2015\_2018 թ.

Վերանայվել է 2016 թ. Ապրիլին

ՎԱՆԱԶՈՐ  
2015

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վանաձորի պետական համալսարանի Մաթեմատիկայի ամբիոնի առաքելությունն է պատրաստել խորը գիտելիքներով օժտված ու գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր մաթեմատիկայի, ակտուարական և ֆինասական մաթեմատիկայի ոլորտում, ովքեր կկազմեն ազգային կրթական համակարգի և գիտելիքահենք հասարակության մաս, կբավարարեն աշխատաշուկայի մշտանորոգ պահանջները, և իբրև խորը գիտելիքներով օժտված ու գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր՝ իրենց նպաստը կբերեն գիտության և տնտեսության զարգացմանը:

Մաթեմատիկայի ամբիոնում իրականացվող գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքները միտված են մաթեմատիկայի, ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը կրթության, գիտության ինչպես նաև տնտեսության այլ բնագավառներում աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով:

## ՏԵՍԼԱԿԱՆԸ

Մաթեմատիկայի ամբիոնի տեսլականն է ձգտել բավարարել աշխատաշուկայի պահանջները պատրաստելով կոմպետենտ մասնագետներ:

### 1. Կրթական

1.Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի շրջանավարտներին մաթեմատիկայի, ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ոլորտներում մրցունակ, պրակտիկ մասնագետներ դառնալու հնարավորություն ապահովող ՄԿԾ-ների մշակում և ներդրում:

2. Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի <<Մաթեմատիկա>> մասնագիտության ուսանողների մոտ մաթեմատիկան՝ որպես մաթեմատիկական մասնագիտության արժևորման և մասնագիտության նկատմամբ պատասխանատվության գիտակցության ձևավորում:

3.Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի <<Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա>> մասնագիտության ուսանողների մոտ ֆինասական մաթեմատիկան՝ որպես իր մասնագիտության արժևորման և մասնագիտության նկատմամբ պատասխանատվության գիտակցության ձևավորում:

4.Այլ ֆակուլտետների տարբեր մասնագիտությունների ՄԿԾ-ների շրջանակում նախատեսված կրեդիտների գործադրմամբ բազմակողմանի զարգացած, մաթեմատիկային պատշաճ մակարդակով տիրապետող գրագետ մասնագետների պատրաստման իրականացում:

5.Ուսումնական խնդիրներին, սովորողների պատրաստվածության մակարդակին և նրանց անհատական բնութագրին համապատասխան ուսուցման միջոցների և մեթոդների մշակում և ներդրում:

6. Առարկայական ծրագրի թեմաների և բաժինների յուրահատկությունների հիման վրա ուսումնական պարապմունքների պլանավորում:

## **2. Գիտահետազոտական**

1. Գիտական և ուսումնական ավելի լայն հանրության հետ ամբիոնի գիտաուսումնական համագործակցության շրջանակների ընդլայնում:
2. Մաթեմատիկայի ամբիոնի հեղինակության բարձրացում ներքին և արտաքին միջավայրում՝ իր կայուն տեղը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում պահպանելու և ամրապնդելու միջոցով, միաժամանակ ինտեգրվելով և մաս դառնալով միջազգային մաթեմատիկական կրթական համակարգի :
3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականության մշակում և մասնագիտական աճին նպաստող որակավորման դասընթացների կազմակերպում:
4. Մովորողների՝ մասնագիտությանը համապատասխան գիտահետազոտական գործունեության կազմակերպում:

## **3. Սոցիալ-դաստիարակչական աշխատանքներ**

1. Ուսանողների դաստիարակչական աշխատանք, նոր միջավայրի հետ ծանոթացում և ադապտացում:
2. Հայրենասիրության, մարդասիրության, մարդ-քաղաքացու որակների դաստիարակում:
3. Պետականության գաղափարի դաստիարակում:
4. Բարոյական և գեղագիտական դաստիարակություն:
5. Աշխատասիրության դաստիարակում:

## **4. Որակի ապահովման**

1. Որակի մշակույթի ձևավորում և դրա ապահովմանն ուղղված որակի ներքին համակարգի կազմավորում և գործառնության նորմավորում:
2. Աշխատաշուկայի պահանջներին համարժեք մաթեմատիկական, ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի կրթությամբ մասնագետների պատրաստում :
3. Ուսուցման գործընթացի համակողմանի վերլուծության իրականացում և դրա հիման վրա կրթության որակի գնահատման համակարգի ձևավորում
4. ՈԱ մի շարք ընթացակարգերի կիրառում, որոնք միտված են ուսումնական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը:

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ**

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Սպառնալիքներ, ռիսկեր
<b>Կրթական գործունեություն</b>						
<p>1. Մաթեմատիկա մասնագիտության կրթական ծրագրի վերանայում:</p> <p>2. Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա մասնագիտության կրթական ծրագրի վերանայում:</p>	<p>1. Որակի ապահովման առաջվոր փորձի ուսումնասիրություն</p> <p>2. Վերլուծություն և ամփոփում /բենչմարքինգ/</p> <p>3. Գործատուների ներգրավում մասնագիտության կրթական ծրագրի որակի ապահովման գործընթացում</p> <p>4. Ուսանողների և շրջանավարտների ներգրավում կրթական ծրագրի որակի բարձրացման գործընթացում</p> <p>5. Ընդհանուր դասընթացների ուսումնամեթոդական փաթեթի մշակում</p>	<p>Կրթական ծրագիրը կազմած խումբ</p>	<p>Մաթեմատիկա կրթական ծրագրի իրականացմանը մասնակցող ՎՊՀ-ի և ԵՊՀ-ի համապատասխան ամբիոնների հետ</p>	<p>Ուս. տարվա ընթացքում</p>	<p>Շուկայի պահանջներին բավարարող</p> <p>1. մաթեմատիկոսի. մաթեմատիկայի ուսուցչի պատրաստում:</p> <p>2. ապահովագրական ընկերությունների և բանկային գործում անհրաժեշտ մասնագետների պատրաստում</p>	<p>Դիմորդների նվազում, դասախոսական կազմի ձերացում</p>
<b>Գիտահետազոտական</b>						
<p>Ամբիոնի համալրումը երիտասարդ կադրերով</p>	<p>Ապահովել երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ և իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդափոխություն:</p>	<p>Ամբիոնի վարիչ</p>	<p>ՎՊՀ, ԵՊՀ, ՀՊՃՀ , ԵՊՄՀ,-ի համապատասխան ամբիոնների հետ</p>	<p>2015-2018 թթ</p>	<p>Ամբիոնը համալրել ինչպես մաթեմատիկայի այնպես էլ նոր մասագիտության համար անհրաժեշտ որակյալ երիտասարդ կադրերով</p>	<p>Երիտասարդ որակյալ կադրերի արտահոսքը հանրապետությունից</p>
<p>Գիտահետազոտական</p>	<p>Մասնակցություն գիտական սեմինարների և</p>	<p>Ամբիոնի վարիչ</p>	<p>ՎՊՀ, ԵՊՀ, ՀՊՃՀ , ԵՊՄՀ-ի</p>	<p>2015-2018</p>	<p>Հրատարակել հոդվածներ</p>	<p>Աշխատավարձի ցածր լինելը,</p>

հողվածների պատրաստում և հրատարակում:	գիտաժողովների:		համապատասխան ամբիոնների և ԳԱ մաթեմատիկայի ինստիտուտի հետ		ռետինգային ամսագրերում	Ֆինանսավորման բացակայությունը,
Ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստում և հրատարակում	-	Ամբիոնի վարիչ	ՎՊՀ, ԵՊՀ, ՀՊՃՀ , ԵՊՄՀ-ի համապատասխան ամբիոնների հետ	2015-2018	Ունենալ որակյալ ուսումնամեթոդական ձեռնարկներ մայրենի լեզվով	Ֆինանսների սղություն

Մաթեմատիկայի ամբիոնի վարիչ՝ \_\_\_\_\_ Ա. Ս. Առաքելյան